



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ ԽՐԱԽՆԱՔ-ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆ

Մեր ազգային ու Եկեղեցական ուրախառիթ տօներեն մեկն է քրիստոսի Համբարձման տօնը:

Համաձայն Արեւմտեան մեր Թեմի աւանդութեանց, եւ հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, Յիսղաբթի, Մայիս 13-ի առաւոտուն, Ս. Պատարագ մատուցուցաւ Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

Պատարագեց Արք. S. Աւետիս Ջին. Թորոսեան: Ջարողեց Սան Ֆրանսիսկոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովի՛ Յոզէ. S. Վաղինակ Վրդ. Մելոյեան:

Պատարագեն Վերջ, Առաջնորդ Սրբազան Յօր հովանաւորութեամբ, եւ Ազգային Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին կազմակերպութեամբ, տեղի ունեցաւ Համբարձման տօնի աւանդական ճաշկերոյթը, Կլենտելի «Անուշ» ճաշասրահին մէջ:

Համբարձման ճաշկերոյթի հիւրընկալութիւնը ստանձնած էր Ազգ. Առաջնորդարանի գօրակիցներեն՝ Տիկին Թալին Ամրոյեան:

Բարի գալուստի խօսք արտասանեց Տիկնանց Միութեան անդամ Տիկին Յուրիկ Ապտուեան, որ ձեռնիհասօրեն կատարեց օրուան հանդիսավարի իր պարտականութիւնը:

Առաջնորդ Սրբազանը կատարեց սեղաններու օրինութիւնը, շնորհաւորեց Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինը՝ իր այս յաջողութեան համար, եւ գլահատեց Տիկին Թալին Ամրոյեանի սիրայօժար հիւրընկալութիւնը եւ փոխանցեց իր բարեմաղթութիւնները: Առաջնորդ Սրբազանը նաեւ Յայ Կոնջ Տարուան առիթով շնորհաւորանքի խօսք ուղղեց իգական սերին, վեր առնելով անոր ծառայութիւնները մեր ընտանեկան ու հաւաքական կեանքներուն մէջ:

Յոզէ. S. Վաղինակ Վրդ. Մելոյեան ներկայացուց Համբարձման տօնին իմաստն ու նշանակութիւնը, ինչպէս նաեւ անդրադարձաւ տօնին հետ առնչուող հայկական աւանդութիւններուն:

Գեղարուեստական յայտագրի բաժինով Ելոյթ ունեցաւ Երգիչ Գագիկ Պատալեան, ճոխացնելով մթնոլորտը:

Ներկաներուն տրամադրուեցաւ Համբարձման Երգերու գրքոյկ մը: Ապա, գլխաւորութեամբ Տիկնանց Օժանդակ Մարմինի անդամ Տիկին Օսան

Թաշճեանի, կատարուեցաւ աւանդական վիճակաձգութիւն եւ խմբային երգեցողութիւն:

## **THE FEAST OF ASCENSION CELEBRATED WITH DIVINE LITURGY AND TRADITIONAL LUNCHEON**

On Thursday, May 13<sup>th</sup>, 2010, the Feast of the Ascension of our Lord Jesus Christ was celebrated with Divine Liturgy followed by the traditional luncheon. H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, presided over Divine Liturgy at St. Mary's Church in Glendale which was celebrated by Rev. Fr. Avedis Torossian. Pastor of St. Gregory Church of San Francisco Very Rev. Fr. Vaghinag Meloian delivered the sermon.

The traditional luncheon, which is organized each year by the Prelacy Ladies Auxiliary, followed at Anoush Restaurant in Glendale, with the participation of the Prelate, clergy members, and nearly 300 guests. This year's luncheon was hosted by Mrs. Taline Amroyan.

Master of Ceremonies and Ladies Auxiliary member Mrs. Hourig Abdulian welcomed the guests then invited the Prelate to deliver the invocation. The Prelate commended the Ladies Auxiliary members for organizing this traditional event and expressed his thanks and appreciation to Mrs. Amroyan for hosting the luncheon. In honor of the "Year of the Armenian Woman", the Prelate conveyed his well wishes to all the women present, exalting their invaluable role in our individual and collective lives.

Very Rev. Fr. Vaghinag Meloian spoke about the meaning and significance of the Feast of Ascension and the religious and national traditions associated with this feast.

Guests also enjoyed a performance by singer Gagik Badalyan, participated in the traditional casting of lots and collectively sang traditional Hampartsoum songs.